Համարը	ՀՕ-80-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2004.06.30/34(333) Հոդ.793	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	25.05.2004
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	19.06.2004
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.08.2004	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ
⊞ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի մայիսի 25-ին

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 7.

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Հոդված 24. Հոգեբուժական օգնություն և ծառայություններ իրականացնելու հետ կապված գործողությունների բողոքարկումը

1. Հոգեբուժական օգնություն և ծառայություններ իրականացնող հոգեբույժի կամ այլ մասնագետի գործողությունները կարող են բողոքարկվել դատական կարգով:
2. Բողոքը ներկայացնում է հոգեկան խանգարում ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7.1.
ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 24.1. Հոգեբուժական օգնության իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը

Հոգեբուժական օգնության իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը»: